ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 30

Բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ուղեգիր տրամադրող մշտական գործող մարզային հանձնաժողովի 2015թ. մայիսի 14 -ին կայացրած նիստի

Նիստի մասնակիցում են հանձնաժողովի 7 անդամներ:

Օրակարգում՝

1. Անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ուղեգիր տրամադրելու խնդրանքով ՀՀ Վայոց ձորի մարզպետին դիմած քաղաքացիների դիմումների քննարկում:

Զեկուցող՝ հանձնաժողովի քարտուղար Ց.Բաբայան:

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց՝

Քարագլուխ գյուղի բնակիչ Աղասի Վարդգեսի Մարգարյանի դիմումը ուղղված ՀՀ Վայոց ձորի մարզպետին՝ պետպատվերի շրջանակներում բուժվելու համար ուղեգիր ստանալու խնդրանքով:

Քննարկման արդյունքում հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

1. Ելնելով բժշկական ցուցումներից և նրա ընտանիքի սոցիալապես անապահով վիճակից Քարագլուխ գյուղի բնակիչ Աղասի Վարդգեսի Մարգարյանին պետական պատվերի շրջանակներում համապատասխան բուժում ցուցաբերելու համար նախապատրաստել ՀՀ Վայոց ձորի մարզպետի /թիվ 18/ միջնորդագիրն ուղղված ՀՀ առողջապահության նախարարին:

Հանձնաժողովի նախագահ Հ.Սարգսյան

Քարտուղար Ց.Բաբայան